ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Ի պատասխան Ձեր 28.11.2023թ. N 12/11 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները ոչ սահմանված տեղում առևտուր անելու փաստի առթիվ արձանագրություն կազմելուց, ինչպես նաև ապրանքների առգրավում իրականացնելուց առաջ բացօթյա ապօրինի առևտրով զբաղվող քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ իրականացնում են բացատրական, գործող օրենսդրության պահանջների իրազեկման աշխատանքներ, ինչը կրում է մշտական բնույթ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում գործում է թվով 12 գյուղատնտեսական արտադրանքի շուկա, որտեղ առկա է 423 ազատ վաճառատեղ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ